ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոն

<<Դասախոսն ուսանողի աչքերով>> հետազոտության ազդեցությունը

ԵՊԲՀ-ում իրականացվող գործընթացների վրա

ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից իրականացվող <<Դասախոսն ուսանողի աչքերով>> հետազոտության (ԴՈՒԱ) արդյունքում կատարված բացահայտումները և վեր հանված խնդիրները մշտապես հիմք են հանդիսանում համալսարանի կրթական գործընթացներում ինչպես նաև կադրային քաղաքականությունում պլանավորվող և իրականացվող բարեփոխումների համար: Հետազոտության արդյունքները և ուսանողների կողմից մատնանշված խնդիրները մշտապես գտնվում են համալսարանի ղեկավար և վարչական կազմի, մասնավորապես ռեկտորի, ուսումնական աշխատանքների և գիտության գծով պրոռեկտորների, դեկանատների և այլոց ուշադրության կենտրոնում:

Ձեզ ենք ներկայացնում որոշ կարևոր գործընթացներ, որոնք անմիջապես բխել են վերոնշյալ հետազոտության արդյունքում վեր հանված խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

- Միայն նախորդ մեկ տարվա ընթացքում դասախոսների որակավորման հանձնաժողովը հիմք ընդունելով <<ԴՈՒԱ>> հետազոտության ընթացքում ստացված ցածր գնահատականները հետագա վերընտրության և դասախոսական գործունեությունը շարունակելու համար չի երաշխավորել ութ դասախոսի հետևյալ ամբիոններից՝

Օտար լեզուներ – 3 դասախոս

Օրթոպեդիկ ստոմատոլոգիա – 2 դասախոս (այդ թվում 1 դոցենտ)

Վիրաբուժական ստոմատոլոգիա – 1 դասախոս

Ներքին հիվանդություններ – 2 դասախոս

- <<ԴՈՒԱ>> հետազոտության արդյունքները ներկայացվում են ամբիոններին և դեկանատներին և քննարկումների նյութ են հանդիսանում ինչպես ամբիոնական նիստերի, այնպես էլ ուսումնամեթոդական խորհուրդների ընթացքում: Որակի ապահովման կենտրոնը բազում երախտիքի խոսքեր է ստանում դասախոսական անձնակազմից ուսանողների օբյեկտիվ կարծիքը վեր հանելու և տրամադրելու համար, ինչը հնարավորություն է տալիս բարելավել անձնային և մասնագիտական որակները:

- Համալսարանի ռեկտորի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից մեկնարկվել է թերապիայի ամբիոններում և առարկայական ծրագրերում բարեփոխումները,

որոնք ենթադրում են առարկայի տարբեր բաժինների դասավանդում համապատասխան նեղ մասնագետների կողմից և օպտիմալացում:

- <<ԴՈՒԱ>> հետազոտության արդյունքում առանձնացվել են որոշ ամբիոններ, որտեղ սկսվել են կրթական գործընթացի բազմակողմանի ստուգումներ հատուկ այդ նպատակով կազմված հանձնաժողովների կողմից: Այդպիսի ստուգումներ արդեն իսկ իրականացվել են վնասվածքաբանության և օրթոպեդիայի, ախտաֆիզիոլոգիայի, դեղագիտական ֆակուլտետի քիմիայի, օպերատիվ վիրաբուժության ամբիոններում:

- Իրականացվում են աշխատանքներ դասախոսությունների որակի բարձրացման ուղղությամբ. մասնավորապես դասախոսությունների ազատականացում, միջմոդուլային և պրոբլեմային դասախոսությունների համակարգի ձևավորում:

- Համալսարանի ռեկտորի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախաձեռնությամբ սկսվել են գնահատման նոր առավել արդյունավետ համակարգերի մշակման և ներդրման գործընթացներ: Այդպիսի համակարգեր արդեն իսկ գործում են հիգիենայի, ֆարմակոլոգիայի, մանրեաբանության ամբիոններում: Սրտաբանության և մի շարք այլ ամբիոններում նման համակարգերը գտնվում են մշակման փուլում և կներդրվեն 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակում:

- Մշակվել են քննական թեստերի որակի գնահատման բանաձևերի համակարգ, որոնք ներդրվելու են էլեկտրոնային համալսարան ծրագրում և թույլ են տալու գնահատել բոլոր ամբիոնների թեստերի որակը և բարդության աստիճանը՝ հնարավորություն տալով թեստերի բաշխումը և առարկայի տարբեր մասնաբաժինների ներկայացվածությունը տարբերակներում դարձնել առավել սիստեմավորված և ձերբազատվել անորակ թեստերից:

- <<ԴՈՒԱ>> հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանում ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից կրթության ոլորտում իրականացվող այլ հետազոտությունների և ուսումնասիրությունների համար:

<<Դասախոսն ուսանողի աչքերով>> հետազոտությունը այն հիմնական գործընթացներից է որը թույլ է տալիս ապահովել մշտական և անխափան կապը համալսարանի կառավարման և հիմնական շահառուների, այն է՝ ուսանողների, միջև:

ԵՊԲՀ Կրթության որակի գնահատման
և ապահովման կենտրոնի ղեկավար Արամ Հայրապետյան

25.05.2018թ.